ՏԱՒՐՈՍ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՓՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ԳԱԺՆՈՐԴԱԳԻՆ

Գուլկարիոյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկ. 12 »
» » վեցամսեայ 6 »

Վ.ՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է ղրկել հետեւեալ հասցէով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և Խմբագիր Տաւրոս շաբաթաթերթի

Х. Чакжрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՏՄԱՆՔ

Խմբագրութեան եկած գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ։ Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ ետ չեն տրուիր։
Դանուցման սողը 20 սանթ.։ Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն։ Դանուցմունք կ'ընդունուին ամէն լեզուաւ։

Ա. ՏԱՐԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՅՈՒՆԻՍ 1898 — ԹԻՒ 18

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Կուսակցութիւն՝ ոչ առաջ եւ ոչ այժմ այլ յետոյ։

Ոչ մէկ ժամանակ կուսակցութեանց և ոչ մէկուն ջատագովը եղած ենք, կատարելապէս համոզուած լինելով թէ՝ մեր ամենուս մտքէն անցած հայրենիքի ազատութեան գործը միմիայն և ընդ միշտ միացեալ ուժերով կրնայ ձեռք բերուիլ ու արդիւնաւոր դառնալ։

Երկար, շատ երկար փորձառութիւնը հաւատքի չափ հաստատուն՝ համոզմունք գոյացուցած է մեր հոգւոյն մէջ թէ՝ առանց միաբանակուռ կազմակերպութեան՝ զիրար հասկնալու ու ճանչնալու անկարող պիտի ըլլանք, որքան ալ վսեմ եւ նուրբ նկատուած լինի գործն։ եւ նոյն իսկ անխարդախ ու անխարդաւան անձնուիրութեամբ գործուի դարձեալ սպասուած արդիւնքը չը կրնար արտադրել չոկ չոկ բաժանմամբ և իրարու հակասող ծրագրով և ուղղութեամբ։

Հայկական դատը, հայրենիքի ազատութեան գործը միակ և անզոյգ բաղձանքն է ամէնքիս, ուստի և պէտք է համաձայնինք և միակցինք այդ երջանիկ յաղթութիւնը ունենալու համար։

Արտաքին թշնամին իր բոլոր առաւելութիւններով տկար է ան ատեն երբ ամփոփ և միասիրտ հոգւով կը զինուինք անոր դէմ, հակառակ պարագային յաղթական և զօրաւոր, կը յաջողի անջատել եւ երկպառակել զմեզ իրարմէ, օրինակներ չեն պակսիր նոյն իսկ մեր ազգային հին ու նոր տարեգրութեանց մէջ։ «Թշնամիք առն ընտանիք իւր», «բաժանեա զի տիրեսցես», ասոնք ըսուած են ժամանակին և դէպքերը հաստատած են թէ՝ շատ ուղիղ դատողութիւններ են։

Կուսակցութիւնները եղան պատճառ մեր այսօրուան տխուր ու թշուառ կացին ու թատրին, կուսակցութիւնները եղան և պիտի լինին մեր աւերման և գլխովին քայքայումին պատճառը. հարիւր հազարաւոր կոտորածներու հեղինակը թիւրք Սուլթանը չէր, այլ կարիչ գործիք մը կուսակցութեանց ազգաւեր ձեռքին մէջ, մենք կուսակցութեան մարդ չենք եւ ոչ ալ կուսակցութիւն մը կազմել կամ ստեղծել ուզողներէն, եթէ կան մեզ համար այնպիսի մտածողներ, կամ մեզ չեն ճանչնար ու մեր գործերը չեն գիտեր եւ կամ՝ մտածումի ու դատողութեան պակաս մը ունին իրենք. թերեւս գտնուին մեզ համակրող բարեկամներ, ասոնց ստեղծուցած վստահութեան եռանդներէն խօսած գտնուին այնպիսի ձեւով մը, ուրկէ հետեւցուի թէ մենք նոր կուսակցութիւն մը կազմել կ'ուզենք. այդ կարգի ենթադրութիւնները բոլորովին սխալ են և մեր կամքին ու նպատակին բոլորովին հակառակ։

Մենք հրապարակաւ կը խոստովանինք թէ՝ մենք Հայ Դատին երդուեալ եւ ուխտեալ զինուորն ենք այսքան երկար ժամանակներէ ի վեր և անոր վերջնական յաղթանակը կ'ուզենք տեսնել ազգային միահամուռ և միասիրտ միութեան դրօշակին տակ։

Կատակի եւ Տաւրոսի էջերը վրկայ են մեր ըսածներուն, եթէ հին գործեր, հին գրուածքներ ժամանակի հոլովումներուն ներքեւ ծածկուած են, ներկան կենդանի եւ ամենուն համար ակն յայտնի է, առանց շղոմի, առանց կեղծիքի կ'ըսենք բացարձակ ինչ որ մեր համոզմունքն է եւ ինչ որ մեր սիրած ու պաշտած Հայրենի դատին օգտակար կը համարենք։

Յեղափոխութիւնը անհրաժեշտ եւ անպայման հարկ մըն է մեր ազգային փրկութեանը համար, մեր առաջին եւ միակ մտածումը պէտք է լինի նախ ազատ վայր մը ունենալ, ազատ մտածելու, ազատ գործելու, ազատ դատելու համար, եւ երբ այդ վայրը ձեռք կրնանք բերել մեր միացեալ ուժերով, այն ատեն թո՛ղ ըլլայ, թո՛ղ կազմուին կուսակցութիւններ որչափ որ կ'ուզեն, այդ ազատութիւնը վայելելու եւ այդ ազատ վայրը կառավարելու ձեւին մէջ, կերպին մէջ, ռեժիմին մէջ. հետեւաբար ըսած ենք և կ'ըսենք առաջին եւ վերջին խօսքը թէ՝ մեզի պէտք եղածը ազգային ընդհանրութիւն է, որի ղեկավարները ըլլան ճանչցուած դէմքեր, նիւթապէս եւ բարոյապէս հանրութեան վստահութիւնը վայելող վարկի տէր անձնաւորութիւններ։

Յիշեալ յիշատակուած գուսակցութիւններուն գործերը եւ անոնց հետեւանքները նոր նոր բացատրութեանց պէտք չունին, որքան ալ անոնք յամառին ու պարծենան իրենց աւերակներով. ընդհանուրին աղաղակը, հայ ժողովուրդին միահամուռ ձայնը եւ Հայրենիքի փրկութեան միակ յոյսը ընդհ. միութեան եւ միաբանական գործակցութիւնն է, որ կարող է միայն պսակել մեր ամենուս փափաքները, իղձերը։

Հին օրերը անցան, ոչ մենք թիւրք կառավարութիւնը կրնանք համոզել եթէ ամէն բանէ եւ նոյն իսկ ամէն մտածումէ վազ անցնինք, եւ ոչ ալ թիւրք կառավարութիւնը մեզ կըրնայ վստահացնել իր խոստումներով, պերաթներով, ընդհ. ու չընդհ. ներողութիւններով, որոնք խաբելէ զատ ուրիշ նպատակ չեն կրնար ունենալ։ Եւ որովհետեւ այս մեր ներկայ վիճակն ալ տանելի ու կրելի բան մը չէ և եթէ այս ընթացքը երկար շարունակէ, դարերու ընթացքի բարբարոսութիւններու ջընջել չը կրցած հայութիւնը, այսպիսի լուսաւոր կարծուած դարու մը մէջ պիտի իսպառ փճանայ, պատմական միայն անուն մը թողլով և կամ ասանդիկ փոշիներու պէս քամահաճոյքներու խաղալիք ժողովուրդ մը պիտի դառնայ։

Փրկարար ճանապարհը մաքուր յեղափոխութիւնն է, մէկ կամ երկու կէտերու վրայ պատրաստուիլ յարմար պարագային, հանգամանքները ի կշիռ առնելով գործի սկսելու, ազդեցիկ և արդիւնաբեր յեղափոխութիւն մը կազմակերպելու համար զէնք պէտք է, ռազմամթերք պէտք է, ուտեստ պէտք է, հաց պէտք է և ասոնք հայթայթելու համար միլիոններ պէտք է եւ այդ միլիոնները այս հայ ժողովուրդը ո՛չ Զաքրեանին կուտայ, ո՛չ Փորթուգալեանին կուտայ, ո՛չ Դրօշակին կուտայ, ո՛չ ալ հին ու նոր Հնչակին, Մարտին ու կեանքին, այլ կուտայ ինչպէս վերը մատնանիշ ըրինք, վստահելի դէմքերէ, բարոյապէս ու նիւթապէս վարկ ունեցող ծանօթ անձնաւորութիւններէ կազմուած չեղոք ղեկավարներու, որի կազմութեան և օր առաջ գոյութեան ակնդէտ կ'սպասէ ամբողջ հայ ժողովուրդը։

Երբ ժամանակ հայ ազգը բաղդ կ'ունենայ այս տեսակ մարմնոյ մը գոյութիւնը տեսնելու, ան ատեն եթէ դեռ կ'ապրինք, մեր դերը կը լինի կէտի մը վրայ զինուորիլ ու հոն ցոյց տալ մեր ազգային ծառայութիւնը, որն որ է ու պիտի մընայ մեր բաղձանաց ամբողջ փառքը. Ուստի կ'ըսենք դարձեալ՝ կուսակցութիւն ո՛չ առաջ եւ ո՛չ այժմ այլ յետոյ։

ՏԱՒՐՈՍ

ՀԱՏԸ 20 ՍԱՆԹԻՄ

Կը ծախուի «Սասուն» սրճարանի կից՝ Նպարավաճառի խանութը և Ասպիւրրահման մզկիթի դիմացը Տ. Զարպհանէլեանի գրավաճառանոցը։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. 17 թիւեն)

Միայն Խանասորի գաւառը թնդացնող ամուլ արշաւանքը կատարուած էր։ Այո՛, այն արշաւանքը որը ամբողջ տիեզերքը պիտի ցնցէր, որը գոյութիւն չունեցող վեհաժողովում հայկական հարցը պիտի լուծէր, բոլորովին հակառակ ազդեցութիւնն ունեցաւ, վեց մեծ պետութիւններից եւ ոչ մէկի շրթունքներն անգամ շարժեց, ինչպէս որ կ'սպասէին անկշիռ ուղղի տէր Դաշնակցական վարիչները։

Խանասորում իրենց կրակած 40,000 փամփուշտները, հայդուկների հրացանաձգութեան ահեղամռունչ որոտումները լոկ Պարակատանում արձագանք գտան աւերելով Ատրպատականի հայոց տունն ու տեղերը։

Իսկ 1897 տարուան արշաւախմբի համար եղած 60,000 բուրլի (150,000 ֆրանք) ծախսը Դաշնակցական որկրամոլ ֆէդայիների (եթէ կարելի է ֆէդայի անուանել) անձերը, ցամքած հրակները պարարեց։

Մի քանի ժամ կռուի մէջ 40,000 փամփուշտ կրակե՛լ, մէկի տեղ քսանը, երեսունը, հարիւրը վատնել, որոնց քանակութիւնը բուն երկրի —Տաճկա-Հայաստանի— մէջ հազարաւոր Հայ կեանքեր կարող էր պաշտպանել, հազարաւոր հայ սրտեր կարող էր միխիթարել։

Մարդիկցիների ամբողջ ոստանուածները 170 հոգի էին, որոնցից 45-ը ազամարդիկներ, իսկ մնացեալները կին եւ երեխաներ էին. եթէ Դաշնակցականների կրակած 40,000 փամփուշտներից 100 փամփուշտը մի Քիւրդ բռպաններ, գոնեա՛ 400 Քիւրդ սպանուած կը լինէր։ Բայց եւ այնպէս մինչեւ Քրդերից ընկածների որոշ թիւ եւ ցեղապետ Շարաֆի չբռնաննուելու ճիշդ տեղեկութիւններ ձեռք բերելը, Դաշնակցականները արդէն շատերի ականջները խլացրել էին իրենց չինծու սքիբաղծութիւնները նկարագրելով մէկը կը գոռար թէ՝

—Ես եմ սպաննել Շարաֆին.

—Ո՛չ դու չես, ես եմ խփել եւ այդ պատիւը ինձ կը վերաբերի կը պոռար միւսը։

—Ո՛չ դու ես եւ ոչ էլ նա, այլ ես խրեցի իմ սուրը նրա-Շարաֆի-կրծքին, կը բղաւէր երրորդ մը եւ անագին կռիւ մ'էր որ կը սկսէին, միքանիսը մինչեւ անգամ ծեծելու պատրաստուել էին իրարու Շարաֆին սպաննողի մը վայել յարգն ու պատիւը եւ դափնիները մէկ մէկուց խլելու համար։

—Հինգ Քիւրդ ես գլորեցի.

—Տասն էլ ես ջարդեցի կը գոչէր միւսը.

—Տասներկուս էլ իմ գնդակներից ընկան, հրապարակի վրայ կը բացագանչէր երրորդ մը, աճուրդի հանուած ապրանքի մը պէս կամաց կամաց մէկը միւսից գներն ու թուերն աւելցնելով, այնպէս որ բոլոր Քիւրդ սպաննուածների թիւը նրանց գոռում գոչումների համաձայն 4-5000 ի կը հասնէր, գուցէ աւելին, մինչդեռ 170 դիակ էր ընկել Քիւրդերից 40,000 փամփուշտի հանդէպ. եւ Շարաֆն արդէն թուից թեթեւ կերպով վիրաւորուած էր։

Ի՞նչ կարգի ընկած մարդկանց քաոս է այս վերջապէս։ Մի՞թէ Հայ հայդուկը կռուել չգիտէ՞։ Մի՞թէ Հայ հայդուկը մնապա՞րծ է, նա չգիտէ՞ որ քաջը եսական ու մնափառ չի կարող լինել, քաջն ինքնիրեն չի կարող գովել, ընդհակառակը՝ քաջը իր ըրածը կ'արհամարհէ, նորանոր քաջագործութիւններով դափնիներ բոլորելու իր ճակտին շուրջը։

Հայկ եւ Արամներ, Վարդան եւ Վահաններ բազկաց հարազատ արիւնը իրենց ջլապինդ երակացը մէջ կրող Հայ ֆէդային չի կարող երկչոտ լինել, անվախ է նա, քաջ է նա, աներկիւղ եւ անվեհեր է նա, քիչ կը խօսի բայց չա՛տ կը գործէ, որովհետեւ անկեղծ է նա, անկեղծութիւն, որքան ջինջ ու անապական նոյնքան եւ վե՛հ ու վսե՛մ խօսք։

Եւ մի՞թէ Խանասորի այդ անկապտակ արշաւանքում տեղի ունեցած այդ խայտառակ նահանջը կռուող զինուորներին կարելի՞ է վերագրել։ Երբէք։ Անկասկած ենք որ Խանասորի արշաւանքի բոլոր հայդուկները առիւծների պէս կռուողներ, ժայռերի պէս վճանդին դիմադրաւողներ էին, բայց միայն զեկավարներն են մեղաւոր, զեկավարնե՛րը. մի քանի Ռուսահայերը, որոնք քաջերի մահուամբ մեռնիլ չեն ուզել, գուցէ եւ չեն էլ կարող, այդ առաւելութիւնը, այդ անձնազոհութիւնը նրանց չէ տրուած, որոնք՝ յետ են դարձել երբ պէսք էր եղել թշնամու վոհմակը թաւալգլոր փախել։ Յետ էին դարձել այդ խրատիլակ փառամոլները կրկին ապրելու, կրկին ապականելու Հայ-Յեղափոխական անարատ մթնոլորտը։

Ռուսահայե՛ր-նենք ասում, բայց մենք համոզուած ենք, որ ռուսահայը ունի իր ազնիւ եւ պարտաճանաչ դասակարգը, որոնք օգնում են գործին, օգնում են ազգին անկեղծ սրտերով, որոնք պիտի ստիպուին վերջապէս օգնել աւելին ինչ որ կ'սպասէ իրենցից Տաճկա-Հայաստանի տանջուած Հայ ժողովուրդը, եւ որոնք գուցէ երբէք չէիտեն թէ ինչպէս են ստորացնում ամբողջ ռուսահայոց անունը Պարսկաստան, Բուլղարիա, Փընէվ եւ այլն տեղերը գտնուող իրենց ստոր դասակարգի ստոր արարածները։

Չթ'կարելի մի բոպէ հաւատալ որ Խանասոր գնացող հայդուկները այդպէս դառնային, եթէ կռուելու սիրտ ունենային զեկավարները։ Քաջ էին բոլոր հայդուկները եւ արժանիք ունեցող զինուորներ, բայց եւ այնպէս հակառակը ապացուցին զեկավարները։

—Ողջ կենայ Դաշնակցութիւնը գոռալով (տե՛ս Դրօշ. 97. թիւ 12) մի մարդու աքեան գլխ ունեցող այդ լաւ մի փամփուշտը զուր տեղ վատնելը եւ քրանաթոր հայ մշակի նուիրած մի կոպէկը շռայլաբար ծախսելը, այդ վարմունքները միայն անաղնիւ, անխիղճ եւ սեւահոգի սողունների բաժինն է։ Բայց ունենք ասում, «խեւին խրատ, սեւին սապոն» ի՞նչ կ'ընէ։

Վերջապէս արշաւախումբը օգոստոսի սկզբին սարերում ու ձորերում կորբուած ոչխարների նման կամաց կամաց իրենց փարախները դառն վերադարձան Պարսկաստանը։ Յայտնի պոռոտախօսներից երկուքը լեռներումն էին կորել, քանի մը օր յետոյ հազիւ երեւացին. իսկ մի քանի սենեակի հերոսները իրենց ձեռքի զէնքերը լեռն էին թողել եւ այնպէս ձեռնունայն յետ եկան, մինչեւ որ Վասպուրականցի մը յանձն առեց գնալ այդ զէնքերը պահուած տեղերից բերել եւ սենեակի հերոս Կոլկասցիներին յանձնել։

Իսկ ընդհանուր հրամանատարը՝ որի մասին խօսելն անգամ չարժէ, իսկապէս ցոյց տուեց որ իր գործը չէր այդ, որ դեռ շատ փորձառութիւնների պէսք ունի, —շատ հաց ուտելու— պէսք ունի որ այդ տեսակ մի արշաւանքի զեկավարելու ոյժն ու կարողութիւնը ունենայ։ Որը իր ամբողջ կարողութեամբ մի սանտեակ չէր կարող վարել։

Խորհուրդ ենք տալիս այդպիսիներին որ երկար ժամանակ հետեւեն փորձառու գործիչներին եւ ապա ստանձնեն Խատասխանատու դերեր, ապա թէ ոչ, պատուաւոր դիրք եւ յարգելի կչիռ երբէք չի ունենայ իրենց գործունէութիւնը։ Հայդուկը ոչխար չէ, եւ ոչ էլ այդ ռազմամթերքները ջրերն են բերել, որ այդպիսիների սրամտութեանը յանձնվեն։

Սոյն կէտերին մենք կրկին կը դառնանք երբ որ ի լոյս կը հանենք Դաշնակցականները Տաճկահայաստանում եւ մասնաւորապէս Վասպուրականում մեր գրուածքները։

Ի մի խօսք կատարուած էր՝ լուրջ հայրենասէրների գործունէութիւնը խանգարող եւ հայի պատմական անաղարտ քաջութիւնը անպատուող-Խանասորի Դաշնակցական արշաւանքը։ Իսկ իրենք առասպելական սուտ քաջութեանց ահագին չտեմարաններով ծանրաբեռնուած Ատրպատականից կամաց-կամաց քաշուել սկսեցին, դէպի աշխարհի զանազան անկիւնները իրենց խղճալի քաջագործութիւնները հռչակելու ամենավառ գոյներով, մատնելով Ատրպատականի Հայ տարրը կրակի, սրի, բանտի եւ տուգանքների։

Ատրպատականը մանաւանդ Սալմաստը թատրոնական մի դահլիճ եւ բեմ էր ներկայացնում իւր դիրքովը։ Դաշնակցականների օյինբազ խեղկատակութեանց ներկայացումներին տեղի տուին աւելի կրիտիկական տեսարաններ, դերն ու դերասանները փոխվել էին այլ եւս։ Քիւրտն ու Պարսիկը սկսեցին խաղալ բեմի վրայ, իսկ Ատրպատականի Հայ տարրը ստիպուած էր բռնի հանդիսատես լինել կատարուած բարբարոսական պատկերներին, Ֆնաուելով նիւթապէս եւ բարոյապէս, Դաշնակցականների անխղճատակ արշաւանքը գլորեց նրան Տաճկա-Հայաստանի ժողովրդեան դրութեան մէջ..... Յեղափոխեցին եւ Պարսկաստանի Հայ ժողովրդեանը.....։

Պարսիկ կառավարութեան ճեղմ քաղաքականութիւնը փոխուել էր այլ եւս դէպի Հայերը, Ֆանատիկոս զզլբաշ ամբոխը իր փութ դանակը սրել սկսեց Սալմասեցի հայերին կոտորելու համար. Թէհրանի Շահի հեռագիրները, Թաւրիզի խիստ հրամանները ստիպեցին Սալմասեցի խաներին մանրամասն խուզարկութիւն անել հայի զիւղերում. [illegible] զակի թալանել սկսեցին Սալմասցիներին։

Յարութիւն առած Շարաֆ Բէգը մի ամիսը չանցկացրեց խեղճ Սալմասցիներից եւ Խոյեցիներից իր վրէժը լուծելու համար։ Ինքը Շարաֆը 300 Մարզիկցիներով այրեց ու քանդեց Խոյի Վառ կէս Հայաբնակ գիւղը օր ցերեկով 2 ժամուայ ընթացքում կոտորելով 58 հայեր այր եւ կին, երիտասարդ եւ ծեր ամէն հասակէ. առեւանգեց նոյն գիւղի հայ գեղուհիներէն մինը։ Միաժամանակ աւրեց նաեւ Սալմասեցի արիւմտեան՝ Սալանիկ, Քաղիկ, Հըմ.գանավա եւ Հախվէրան Հայ գիւղերը. խե՛ղճ, անզէն գիւղացիներէն ով որ կարողացաւ ազատուեցաւ, իսկ մնացեալները նոյնպէս մորթուեցան։ Հըմպանավա գիւղից տարան մի հայ օրիորդ, իսկ բոլոր գիւղերի կայքերն ու ցանքերը որը տարան եւ որը այրեցին։

Դա՞ռն, շատ դա՞ռն են այս իրողութիւնները եւ տխրազդեցիկ այս մերկութիւնները, որք սակայն ապագայ պատմագիրը անցեալի ճշմարտապատում տեղեկութիւններից չչեղուելու համար սրտիկն ի խորով, արցունքն աչերին, դողդոջուն գրչով եւ սեւ գոյներով պիտի նկարագրէ —Հակայեղափոխական եւ Հայրենասէր— մակդիրներ գրօշմելով դիմակաւորների ճակատին, մերկութիւնները, որոնք եւ յաճախ կարող են վհատեցնել հասարակութեան թերահաւատ դասակարգերին, բայց եւ այնպէս մի՛ լքանիր եւ մի՛ ընկճիր դու Հայ ժողովուրդ, անընդհատ մղիր գոյութեանդ կռիւը, կը դայ ժամանակ, գուցէ եւ հեռուն չէ այն երբ այլեւս ի չիք կը դառնան այդ ներքին ճիւաղները իրենց կորստաբեր էութեամբ, անհամ եւ անգոյն յիշատակաբաններով եւ վաղանցիկ յիշատակներով։

Ողորմելինե՛ր, որոնք մինչեւ գերեզմանը հազիւ թէ ապրին....։

Վարդն առանց փուշ, լոյսն առանց մութ կը լինի՞։ Բնականօրէն Հայ-Յեղափոխական շրջանումն էլ պիտի երեւան գային՝ վարդի պէս անարատ ու անբիծ գործիչների, լուսոյ չափ պայծառ ու յստակ, կենսատու հայրենասէրների հակապատկեր՝ խոշնդտա փուշերն, մութին մէջ խարխափող եսամոլ խաւարայիններն.....։

(Շարունակելի) ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԳՈՂ ՍԻՐՏԸ ԴՈՂ

Ցանօթ անձնաւորութեան մը նպատակասլաց Տիար Ամիրխանեանցի օթեւանը այցելող անկոչ հիւրերու նկատմամբ գրած նամակը բոլոր տեղական թերթերու մէջ կարդացուեցաւ, բացի Շարժումէն, գրեթէ առանց բացառութեան ամէն ամսթիած հայ շիկնեցաւ քանի մը սրիկայ ազգակիցներու այդ եսկերեցի արարքէն։ Սակայն զարմանալի էր սա կէտը թէ՝ ոչ Տիար Ամիրխանեանցի ինքնագիր նամակին եւ ոչ իսկ զայն հրատարակող թերթերու խմբագրական յաւելուածին մէջ չը կար խօսք մը, բառ մը, կէտ մ'իսկ որ ընդունակ լինէր որակելու թէ այդ սպառնալիքի տակ գրամ պահանջողները Հնչակեա՞ն էին թէ Դաշնակցական, յեղափոխակա՞ն էին թէ պահպանողական, հապա միքանի սրիկանեբողջութիւնը։ Եւ սակայն այդ ԱՐիկայ բառը, որ ամենաճիշդ և յարմարագոյն ածականն էր այդպիսի ցած գերակատարներու, կարծես թեւեր կ'առնէ և սլաքի մը ուղղութեամբ կ'երթայ կը մխուի ուղղակի Շարժումի յարգոյ խմբագիրներուն արդէն իսկ ցաւագար սիրտը, կարծես թէ իրենց համար ըսուած լինէր, կամ թէ իրենք եղած ըլլային այդ մութին մէջ գործող սրիկաները։ Ո՛վ երանելի խմբագիրներ, միթէ տակաւին կը տարակուսի՞ք թէ ինչպէս ուրիշ ազգայնոյնպէս ալ մեր մէջ չեն պակսիր աւազակներ, գողեր, խարեբաներ, խաւարի և սուտերի զաւակներ, և այնքան խելքի ու մտքի դէմ բան մը կը կարծե՞ք որ այդ դասակարգի պատկանող քանի մը սեւհոգի ապարածներ մտածած ու գործադրած լինին սպառնալիք մը Տիար Ամիրխանեանցի վրայ։

Այս առթիւ թոյլ կուտա՞ք քանի մը հարցումներ ուղղել Ձեզ։ Թէ ինչո՞ւ կը մնանք կամ չգիտենալ կը ձեւացնե՞ք սա անվիճելի ճշմարտութիւնը թէ մեր մէջ, մանաւանդ հոս Վառնայի մէջ մեր ազգակից-

ներու մէկ մեծ մասը հասած ըլլալով թշուառութեան և աղքատութեան ծայրագոյն աստիճանին կըրնան շատ դիւրաւ հակիլ և անձնասարը լինել մինչեւ իսկ իրենց նկարագրին օտար եղող շատ մը թերութեանց և մոլութեանց զոհ ձաղկել, քննադատել, սրբագրել լրագրութեան միակ սրբազնագոյն պարտականութիւնն է։ Ուրեմն կամ պուք ինքզինքնիդ այդ պարտականութենէն դուրս կը համարիք և կամ դուք . . . . . ։ ։ ։ Ձեր «գնահատողը հասարակութեան մոքին վրայ ահա այս համոզումը միայն կրցաւ փարագրել. բան մը որ իբրև գրաւէր սմն և մամլոյ ջերմ սիրահար, զիս չափազանց վշտացուց։ Տիար Ամիրխանեանց՝ բարի յանձնակատար մ'է ըսկ Գերմանացի բարեգործներու, հետեւաբար եթէ իրեն ըստած է թէ՝ պաշտօնիդ շրջանը եկած լմնցած է, ինք ամենայն ազատութեամբ կարող է դադրիցը նել նպատակ գործը և մեկնիլ վատնայլ, ինչպէս ըրին Օր. Ֆրայզեր և ուրիշներ։

Բացարձակապէս սիալ և անտեղի կը գտնեմ ձեր այն մտածումը թէ՝ Տ. Ամիրխանեանց ձանձրանալով իր իսկապէս դժուար պաշտօնէն, պատրուակ մը փնտռէ անկից ազատելու եւ այլն։ Ձեմ գիտեր թէ ո՞ր քամին կամ ո՞ր շոգին է որ մերթ ընդ մերթ կը փչէ կը շարժէ ու կ'այլայլէ Ձեր դատողութեանց կշիռը և յաճախ այս կարգի այլանդակ գրութիւններ, կամայ և ակամայ դուրս պոթկացնելով ձեր գանկէն զզուանքով և արգահատանքով կը լեցունէք ձեր ամենամօտ բարեկամները եւ համակրողներն իսկ։

Նը հարցունմ ձեզ, չի կա՞ն այնպիսիներ որք ապառնալիքի տակ [illegible] ընարած ըլլան, եւ կը տարակուսի՞ք, կը վարանի՞ք արդեօք ըսել մեզի հետ թէ նոքա սրիկաներ չեն։ Ուրեմն ինչո՞ւ պնակալէզ անուանել այն թերթերը, որ ձեզմէ չա՞տ արթուն դանուելով և այդ անունով մկրտած էին Տիար Ամիրխանեանցի ահաճոյ և ինքնակոչ հիւրերը։

Եթէ ամէն բան ձեր ակնոցով դիտող, ձեր կշիռքով դատող եւ ձեր թեթեւսոլիկ տրամաբանութեամբ հեռուցնող լինէինք, ձեր իսկ վարմունքէն և գրութենէն հեռուցնելով, դժուար չէր ըսել ձեզ թէ՝ «պարոնե՛ր, ուրեմն դուք էիք հեղինակը այդ եպերելի արարքին», սակայն մենք բաւերուն ծանրութիւնը գիտենք կշռել, գիտենք յարգել անձնականութիւնը, գիտենք թէ՝ ահռելի սոխիր մ'է՝ մարդ մը բարոյապէս մեռցնելու նկրտիլը։ Այսու հանդերձ ժողովուրդ է, կըսէ, իր ժողովրդական տառածով՝ «Գող սիրտը դող»։

Օ՜ն, աշխատեցէ՛ք ուրեմն ժողովրդեան այս անողոք վճիռէն օձիքնիդ ազատել և ինքզինքնիդ արդարացունել։

Ա. ԳՈՒՐՊԷԹԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՄԵՐ ԱՆՑԵԱԼԸ

Ս.ռ Գ. Ե.

Բ.

. . . Մշեցի կարիճը վայրկեան մը լռեց։ Կարծես թէ այնքա՛ն լեցուած էր իր հոգին, որ չէր կրնար պարպուիլ։ Տխո՛ւր, հոգին ամենէն աւելի դառնացնող հառաչանք մը հանեց և շարունակեց իր պատմութիւնը։

— «Այո՛, Ալի՛ն, Ալին չըկար...։ Մեր ընկերները մէկ մէկ կողմ փախած էին։ Աղօթարանը բացուելու արդէն մօտ էր։ Ի՞նչ ընէինք։ Ուրիշ ճար մը չըկար։ Շուտով լեռները, ձորերու ու ծառերու մէջ մըտանք և կրցանք մինչեւ իրիկուն պահուըտիլ։

«Այնքա՛ն ընկերներէն միայն 8 հոգի մնացեր էինք։ Մտածեցինք թէ գիշերով ո՞ւր կրնանք երթալ, քանի որ ճամբայ չենք գիտեր, եւ ո՛ւր ըլլալիս անգամ յայտնի չէ։ Արդեօք Ռուսի սահմանին վրայ է՞ինք, թէ Աճմու հողին մէջ։ Մեր շուրջը լեռներ, պաշտեր և ընդարձակ անտառներ կը տեսնէինք, ո՛ւրիշ ոչինչ։

«Է՜հ, ըսաւ մեզմէ մէկը, նստելով էստեղ ճար մը չեղիր, ախպէր ջա՛ն, էլնենք կանչենք Աստուած, կանչենք մեր սեւ չինար բաղդը եւ շարունակենք մեր ճամբան։ Խաբուեցա՛ք. էլ մտածելու ժամանակը չէ մնացեր։ Էս շան որդի գոմիթաներ ստակնիս առնելու համար մեզի մինչեւ հոս բերին և սուրի, կրակի՝ ու թշուառութեան մէջ դնելով կծիկը դրին։

—«Խա՛, խա՛, կրկնեց մեր ընկերներէն Ներսունի Դանօն. կէս բան չեմ ասեր, ախպէրներ, մինակ թէ էսանք Աստծու կրակին գան որ ա[illegible] կրակը մը [illegible]...։

—«Տէ՛, տէ՛ իսկուսի փուհ բանեբու վրայ մի՛ խօսիք։ Ճամբայ ելնենք, պօռաց ընկեր մը։

Գիշերուան երկուքը կար։ Մութ և ամպամած գիշեր մըն էր։ Բաղդերնուս ապաւինելով ճամբայ մը բռնեցինք և սկսանք ետ դառնալ։ Ամբողջ ութը ժամը քալելէն յետոյ, լուսադէմին հասանք գիւղ մը։ Փոքրիկ, գեղին հաւասար տուներով և հազիւ երեսունի մօտ գիւղ մըն էր։ Աստուած տուաւ որ գեղացիներէն շատը հայեր էին, որոնք բաւական բարի մարդիկ երեւցան մեզի։ Սիրով ընդունեցին մեր խնդիրը, կերակուր տուին և անկից մեզ առաջնորդեցին մինչեւ աւան մը, ուր կարաւաններ կային։ Է՜հ, չեմ կրնար պատմել թէ ի՛նչ խեղճութիւններ քաշեցինք։ Ստակնիս հատած էր . . . անօթի ճամբորդութիւն ընե՛լ, սոսկալի՛ բան էր։

. . . . . .

. . . . . .

. . . Մենք զանց կ'ընենք այստեղ յիշատակել խեղճ Մշեցի կարիճին քաշած նեղութիւնները Կովկասի մէջ, Պոլիսի մէջ և անկից մինչև Պուլկարիա գալու համար կրած դժուարութիւններու վրայ։ Սարսռալի և անգութ յիշատակութիւն մը պիտի ըլլայ ասիկա մեր պատմութեան մէջ . . . ուստի չենք ուզեր այս քանի մը տողերու մէջ ամփոփել զայն։

Ո՛չ, մեր նպատակը պարզապէս անո՛նց, միայն անոնց երեսին զարնել է այս կարգի անարգ խարդախութիւններ և զեղծումներ, անո՛նց որ կ'ուզեն դեռ խաբել, ամբողջ ազգը խաբել, մի՞շտ խաբել . . .։

Կ'ուզենք մատնանիշ ընել այն վերքերը զոր անխղճօրէն հայու սրտին մէջ բացին, ուսկից արիւնը չը քամուիր, այլ՝ կեանքը։

Ա՜ռ՝, կուզենք այդ բոլորը ցոյց տալ ամեն անոնց որ ոճրագործներ կոչուելու տեղ, հայրենասէր և ազգասէր յեղափոխականներ կը կարծուէին։

Բայց նայինք ուսկի՞ց եկան ատանք եւ որո՞նք էին այդ հայրենասէր մարդիկ։ Այսօր վճռական կերպով կարող ենք ըսել թէ Կովկասցի քանի մը տաք գլուխ երիտասարդներ էին ատանք որ Ժընեվի մէջ քիչ շատ ուսմունք ստանալէ յետոյ, ուզեցին Վարդաններ, Սմբատներ եւ Ռուբէններ դառնալ այն երկրին համար զոր չէին ճանչնար եւ անոր բնակիչներէն գուցէ մէկ հատը չէին տեսած։

—«Հայասան հայուն է» ըսին։ Պէտ՛ք է «Մէկը ամենուն համար, եւ ամենքմէկուն համար ըլլայ» դաղափարը ժողովուրդին տանք։

Արդարեւ այս ակզբունքը, զոր շատերուս համար ապագայ երանութեան խոստում մը կը կարծէինք, դժբաղդաբար արիւնալի ոճիր մը դարձաւ։ Կովկասցի երիտասարդները դերակշիռ անուն մը, համբաւ մը կուզէին ունենալ. այդ անունը, այդ համբաւը հայկական յեղափոխութեան մէջ փնտռեցին։ Հայութեան յեղ,եղուկ ճակատագիրը խաղալիք ըրին իրենց անիշխանական մտածումներուն, եւ ուր տեղ միամիտ մը, կաթնատու կով մը, տխմար մը՝ բռներ կրելու, վերջապէս ռամիկ դասակարգ մը տեսան, գառնուկի կերպարանքով մսատեցան քովերնին եւ զանոնք շահագործեցին՝ իրենց բոլոր որոշ ու յայտնի նպատակներուն ծառայեցնելով։

Կեղրոնավայր մը պէտք էր, ատիկա հաստատուեցաւ Ժընեվի մէջ։ Երկու հատ ուսանողներ եւ մէկ հոգի ալ անոնց խարդախական մը գըտնելէն յետոյ, թերթ մը հրատարակել ուզեցին։ Ա՜նո՛ն . . . է՜հ, Դրօշակ դրին։

Դրօշակի հրատարակութեան առաջին շրջանը այնքա՛ն ողբմելի եղած է որ այսօր զայն յիշողներուն անգամ սոսկում կուտար։ Տխո՛ւր, դառնացուցի՛չ եւ գթալի՛ օրեր, ինչպէ՛ս շուտ . . . որքա՛ն շուտ անցաք գնացիք։

(Շարունակելի) ԼԵՌՆ Ց

ԵՐԿՈՒ ԵՐԳ

Կը սարսռան զոյգ թիերը մակոյկին,
Անծուփ, նիրհած ջուրերուն մէջ գեղեցիկ
Անծուփ, արծաթ » » սառնային
Կը բեկբեկի սաւերն կայմին նրբաձիգ։

Մակոյկին մէջ ընկողմանած մինակուկ
Ես կ'ըմբոշխնեմ լուսնակ գիշերը անյոյզ
Ու խմ սիրտս երգ մը կ'ելլայ սեւ ու սուգ
Երգը խաչին, զոր մենք կը կրենք անյոյս։

«Օ՜հ, ա՛լ վերջ մը այս տաժանքի մութ ճամբուն,
Արուեստյան մեր տաքերը փուչերէն,
Դակծկուեցան մեր սիրտերը ցաւերէն,
Օ՜հ, ա՛լ վերջ մը այս տաժանքի մութ ճամբուն . . .»։

Թուռակները դողդողացին սրսփանքով,
Զիլիցին ալիքները արծաթած,
Երգ մը ելաւ ծովին հոգիէն խաւ,
Նուրբ մրմունջ մը, հրեշտակային, մեղմ ու ցած։

«Դո՛ւք որ կեանքի խաչին ներքեւ կը հեծէք,
Դո՞ւք որ խորունկ կը հառաչէք մութին մէջ,
Ո՛վ խոնջածներ, տեսէ՛ք հեռուն Այգը չէկ
Այգը բարի, կեանքի Այգը մշտանչէջ։

«Ձեր նոճերէն ու արիւնէն կը շինուի
Արշալոյսը երջանկաբեր ու ծաղիկ,
Ու ձեր հոգին անանկուն միշտ, կորովի՛
Կը վերապրի ա՛յն կեանքին մէջ երջանիկ»

ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ՇԱՐԺՈՒՄ

ԵՒ ԻՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Դ.

Շարժումի Տարոնի ուղղութիւնն հակայեղափոխական նկատելով, ճիգեր կը թափէր իր ընթերցողները համոզելու թէ՝ Զաքրեան ու Ճգնաւորեան կոչումն ունին ջլատելու ազգին բարոյական ուժերը և ազատութեան ամենաազնիւ ձգտումները։ Մենք Տ. Տ. Զաքրեանի և Ճգնաւորեանի գրածներուն մէջ ցարդ հակայեղափոխական ոչ թէ ուղղութիւն այլ բան մ'իսկ չկարդացինք. Շարժումի եթէ կարդացած է կ'սպասենք որ ցոյց տայ. բայց եթէ Հնչակեաններու և Դաշնակցականներու խօլ շարժումները և ազգակործան ուղղութիւնը քննադատող թերթի մը ուղղութիւնն է, որ հակայեղափոխական կը նկատէ. կը ցաւիմ ըսել որ, Շարժումի այսքան տակաւ հասկացողութիւնն որակելու բան չունին հայ բառարանները։ Կ'երեւայ թէ Շարժումի խմբագրութիւնը մեր ազգային պատմութեան կեանքի ո՛չ թէ հեռաւոր այլ նոյն իսկ մօտիկ անցեալի մը մէջ կատարուած իրողութիւններու անգիտակ է և կամ կը կեղծէ սոփեստական դարձուածքներով։

Շարժումի խմբագիրներու գուցէ լոյս աշխարհ գալէն յառաջ Զաքրեան իր 18-20 ամեայ հասակում 1862ի Զէյթունի ապստամբութեանց մէջ խաղացած դերերով ցոյց տուած է, որ հայրենիքի ազատութիւնը միմիայն հատատ քայլերով և շրջահայեաց ուղղութեամբ կը լինի. նոյնպէս 1866-70 և 78ի

Զէյթունի շարժումնց վարչապետն եղած է։ Զաքրեանի՝ Կ. Պոլսոյ մէջ եւրոպական դեսպանաց ներկայութիւնն՝ հարուցած Զէյթունի կենսական հարցը իրական և պերճախօս փաստեր չե՞ն մեկներ իր ճշմարիտ և անկեղծ հայրենասիրութեան։

Մեր ներկայ յեղափոխականները ոչ՞ն արդեօք իր անձնական ծախսով և այն ալ 25-30 տարի առաջ, ժողովրդեան ապագայ սերընդի զարգացման սատարելու միտումով կրթական խնդրով զբաղեցաւ և Զէյթունի մէջ 12 տարի շարունակաբար վարժարանին նիւթական և բարոյական մնայուն կարգութիւնն ստանձնեց. ոչ՞ արդեօք կռուի դաշտին վրայ թշնամի հարուածներուն դիմաց անվեհերութեան օրինակ հանդիսացաւ։ Եթէ Շարժումի ասնք չդիտեր, մենք գիտենք, որ այդ յեղափոխական հայ զինուորը Տ. Յարութիւն Զաքրեանն էր, որ Շարժումի խմբագրութեան պէս ամբաստանութեան մը համար առաջարկուած մեղմատէն խոյս չտուաւ և մեղայագիր չստորագրեց և. ոչ ալ յիմարօրէն գաւառացի պանդուխտներուն «զինուոր եղիք» խարագրով քաջալերական չկարդաց և ոչ՞ ալ պանքայի հերոսներուն նըմանն ինքզինքը աղատելու համար ամբողջ Կ. Պոլսոյ հայութիւնը սրբածութեան չմատնեց, այլ իբր Զէյթունի հարազատ զաւակ թշնամոյ բանակին կուրծ տուաւ տմենայն արիութեամբ։ Ո՞ւր էին Շարժումի պոռոտախօս ղեկավարները և ի՞նչ կ'ընէին, երբ Զաքրեան 90 ի դէպքերէն շատ տարիներ յառաջ ոգի ի բուն կ'աշխատէր ազգային պաշտօնի և ո՛չ պաշտօնական ներկայացուցիչներու և գործիչներու հետ ամէն անգամ որ Զէյթունի և Մայր Հայրենիքի խնդիրը քաղաքական շահագործութեանց տարկայ կը լինէր։

Մեր նախաշաւղէն հեռացած պիտի ըլլանք եթէ մանրամասնութեանց մտնենք, զի մեր նպատակը Զաքրեանի կենսագրութիւնը տալ չէ. բայց կը հարցնենք ի՞նչ ըրին մեր յեղափոխականները Տ. Զաքրեանի նկատմամբ. ի՞նչ ըրին գիտէ՞ք հայութեան ճակատագրին այդ ինքնակոչ արտօնեալները.—

Զաքրեանը այն ատենն կաշկանդեցին, որ յակամայ կամ Սիլիստրէի գաւառակի Թօքմաղ գիւղին մէջ առանձնացած, հայրենիքի ներկայ աղէտներովը մրկուած, իր անցեալի վերյուշումով, Զաքրեան վատութիւն համարեց անտարբեր մնալ։ Նա թէեւ Թօքմաղ գիւղի մէջ զրպարտուեցաւ տաճկաց առջև հայէ մը թէ Զէյթունի մէջ յանցելում՝ ոչ նուազ թուրքերու արիւնը ծծած է եւ այլն եւ այլն. սակայն այս փորձն ալ անյաջող եղաւ և այն վատ հայը վերջ ի վերջոյ ստրպուեցաւ տեղի տալ, զի տաճիկ դիւաձիւք խիստ համակրութեամբ և ակնածանօք կը վերաբերուէին դէպի մեր հսկայ Զէյթունցին։

Յեղափոխութեան անուան տակ գործուած զեղծումները, ինչպէս կանխաւ ըսինք, ժողովուրդին մէջ հակառակ հոսանք մը յառաջ բերին. և ահա ժողովրդական այդ արդար բողոքոյ արձագանք հանդիսացած՝ կրկին հրապարակ ելաւ Զէյթունցին։

Դժոխային կիրքերու վերապահուած էր սակայն վերջին դաւադրութիւն մ'ալ լարել Զաքրեանի դէմ, և այդ հրեշային դաւաճանութեան ուելի զարկ տալու նպատակաւ անարժէք թերթ մը խօսք ու գրիչ չխնայեց։

Շարժումՙ իր ուղղութենէն դաւելով ոչ այլ ինչ է եթէ ոչ՝ հանրային յառաջդիմութեան, ժողովրդական ինքնաճանաչութեան եւ առողջ քննադատութեան երդուեալ թշնամին. Ուստի Շարժումէ կը պահանջուի, որ նա այսորիկ դադրի հաստատել և հաւատացնել թէ՝ Տաւրոս հակայեղափոխական է. ընդ հակառակը Տաւրոս՝ ժողովրդեան ինքնաճանաչութեան օժանդակող և անոր ծոցին մէջ յեղափոխութեան անուամբ կատարուած, կատարող և կատարուելիք իրողութեանց անաչառ քննադատն է. նա ժողովրդեան ամենաազնիւ զգացման զեկավարն ու արձագանքն է, և Շարժումՙ քանի որ իր բարոյական և իմացական ուժերով անկարող է չատագովելու Տաւրոսի խարազանած և խայտառակած մերկութիւնները. լրագրութեան սրբութիւնը զրպարտութիւններով, օգտաբանութեամբ և զառանցանքներով աղտոտելու անազնուութենէն զզուշանալու է խպտա։

Սիրելի է մեզ յուսալ, որ մեր գիտողութիւններն որչափ ալ սուր և կծու երեւնան Շարժումի խմբագրութեան, պարձեալ կ'ունենան իրենց բարերար ազդեցութիւնը, և այն թերթը որ երբեմն իր մէկ աշխատակցին միջոցաւ անաչառութեան և անկեղծութեան դրոշմ կրող քննադատութենէ խրատիլ չէր ուզեր, չանտեսէր մեր դիտողները։

ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

1896 Թուականի Յունիս 14 ի ախտ՝ եւ սրատաճիկ յիշատակներով լի երկրորդ տարեդարձը կատարուեցաւ երբ Մ. Աւետիսեան և 400 էն աւելի զինակից ընկերները Վասպուրականի Աղբակ գաւառի Ս. Բարթուղիմէոս վանքի առաջ նահատակուեցան քաջի մահուամբ։

Սոյն 1898 թուականի Յունիս 14 ին՝ այսինքն անցեալ կիրակի՝ վառնայի Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ կատարուած հոգեհանգստեան արարողութենէն վերջ եկեղեցւոյ բակի մէջ երկսեռ բազմութեան ներկայութեան ատենախօսեցին «Տաւրոս»ի խմբագիրը եւ Տ. Ապքանազ։ Դպրոցի երգեցիկ խումբը աւուր պատշաճի մի քանի հայրենաշունչ եւ սրտառուչ երգեր երգեց։

«Տաւրոս»ի խմբագիրը խօսեց նահատակութեան նշանակութեան մասին, իսկ Տ. Ապքանազը իբրեւ ականատես եւ մասնակից Վանի ինքնապաշտպանութեան կռուին կարճ և ամփոփ կերպով ցոյց տուաւ Վասպուրականի կոտորածի սկզբնապատճառ եղող շարժառիթները՝ վառ գոյներով նկարագրելով գաղտարարական նահատակ զինուորի արիութիւնը եւ Մ. Աւետիսեան խմբի 15 օրեայ դիւցազնական կռիւը թշնամու անհամեմատ ուժի դէմ եւ վերջի վերջոյ Աղբակի դաշտի մէջ հերոսական մահուամբ նահատակուելու պարագաները։

Յունիս 14 ի տխուր եւ վրէժինդրական յիշատակները Հայ ժողովրդեան սրտին մէջ վառ պահելու համար արժէ որ ամէն տեղի Հայերը անմահացնեն հայրենիքի ազատութեան համար զոհուող զինուորների յիշատակը, 1896 Յունիս 14 ի տարեդարձը տօնելով, ինչպէս որ անդրանիկ տարեդարձը կատարեցին յանուն պատահանաչութեան Վասպուրականի, Արարատեանի, Կովկասի, Բուլղարիոյ, Եգիպտոսի եւ Ամերիկայի Հայերը։

Ուրա՞խ նուիրական եւ պատմական է մեզ համար Աւարայրի դաշտը, այսուհետեւ նոյնքան նուիրական եւ պատմական պիտի լինի Աղբակի դաշտը իր Թարմ եւ յուզիչ յիշատակներով...։

Վարդանեանք՝ կրօնի ազատութեան ախոյեաններ, իսկ Աւետիսեանք՝ Հայրենիքի ազատութեան պաշտպաններ։ Երկուքն ալ ազգային զոհեր, որոնց յիշատակները պիտի ապրին այնքան դար որքան պիտի ապրի Հայ ազգը։

Հոգեհանգստեան հանդէսը երկու ժամ տեւեցաւ [illegible] դիմանները կոծ եւ զգածուած տպաւորութեան տակ մեկնեցան։ Ցանկալի կը լինէր որ Տ. Ապքանազ իր ատենախօսութիւնը գրաւոր ամփոփումով «Տաւրոս»ի ընթերցողներէն շատերուն փափագներուն գոհացում տալու համար հրատարակէր։

Ազն. Օր. Արմաւենի Սահակեան կ'իմացնէ թէ՝ տեղւոյս Ազգ. կրթարանի Ա. տարեշրջանի քննութիւնները պիտի սկսին Բշ. Յունիս 15 եւ պիտի վերջանան Եշ. Յունիս 25։

Ռուսճուքի Ազգ. դպրոցին մէջ տեղի ունեցած ցուալի դէպքի մը առթիւ ստացած ենք թեր ու դէմ գրութիւններ, զորս պատշաճ դատած ենք չը հրատարակել առ այժմ, պահանջելով հրապարակաւ տեղւոյն Պատ. Հոգաբարձութենէն եղելութեան ճշգրիտ պատմութիւնը իրաւունք գայթակղեալ մարդոց։ Հակառակ պարագային պիտի հարկադրուինք մեզ հասած գրութիւնները նոյնութեամբ հրատարակել պատասխանատուութիւնը թողլով գրողներուն։

— Փ. Պոլսէն գրութիւն մը հասած է մեզ որուն հրատարակութիւնն ետ ձգեցինք տեղւոյ անձկութեան պատճառով։

Դաշնակցականի թափթփուքները կարմիր տերորի դատապարտել կ'ուզեն եղեր մի երիտասարդին՝ որն որ Դաշնակցութենէ զզուած, անջատուած է այժմ։

Նոյնպէս Պուլկարն կը գրեն թէ՝ Դաշնակցականութեան Նորընծայ պարոնին մէկն ալ ուզած է երկու ծանօթ պարոններու դէմ զրպարտութեամբ դատադրութիւն մը գործել, սակայն չէ յաջողած. տեղւոյն ոստիկանութիւնը կարեւորութիւն չէ տուած զրպարտիչ դատադիրին։

«Տաւրոս» միայն ցաւ կը յայտնէ այս տեսակ տղայական եւ միանգամայն անպատուաբեր մտածումներուն համար, որոնց հեղինակները ոյքեր ալ ըլլան կը խրատենք որ քիչ մը լուրջ լինին եւ քիչ մ'ալ մարդավայելը ընթացքի մէջ գտնուին։

—Մեզ լուր կը տրուի թէ՝ Թուրք կառավարութիւնը գաղտնի լրտեսներ ուղարկած է Պուլկարիա գրոնուող գաղթականաց արամաղրութիւնները հաւկնալու համար։

ԵՌԱՄՍԵԱՑ ԳՆՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՎԱՌՆԱՅԻ

Ազգ. երկսեռ վարժարանաց եռամսեայ շրջանի հրապարակային քննութիւնք կ'ըսկսին ամսոյս 21 ին եւ կը տեւեն մինչեւ 29։

Քննութիւնք տեղի կունենան մանչերու վարժարանին մէջ, առաւօտեան ժամը 8 1/2 էն 12 և [illegible] 2—6. իսկ կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 9 1/2 — 12 եւ կէս օրէ վերջ 2—6։

Շաբաթ, 27 Յունիս. 9—12 մանկապարտէզի քննութիւնք։

Ստիպողաբար կը խնդրուի կըրթասէր հասարակութենէն որ բարեհաճի իր ներկայութեամբ քաջալերել ուսանողութիւնը իր առաջին քայլերուն մէջ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺ. ՎԱՌՆԱՅԻ

Դիտող.— Մասնաւոր հրաւիրագիր ուղղուած չըլլալով՝ կը խնդրուի ներկայ ազդարարութիւնը իբր այն նկատել։

ԱԶԴ

Այն անձը որ ինձ գրաւ տուեր ու տակ առեր է ժամանակին ետ դարձնելու, կը խնդրուի որ ժամանակը անցած ըլլալով շուտով պարտքը վճարէ. եթէ ոչ ստիպեալ պիտի ծախեմ, որովհետեւ վաղնայէ հեռանալու դիտաւորութիւն ունիմ։

Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑ

Печат. Войниковъ—Варна